**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Գայ համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ,
Հեռ. (0231)60136 , gay.armavir@mta.gov.am

N 188
*16 հոկտեմբեր 2017թ.*

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի 2017թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. Մարկոսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 49

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով , <Տեղական ինքնակառա-վարման մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, <Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով , Հայաստանի Հանրապետության կառավարության 13.11.2008թվականի թիվ 1328-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ռադիկ Խաչատրյանի 2017թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը.

Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Երևանյան 1 փողոց, թիվ 3 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Ռադիկ Սազանի Խաչատրյանի (ծնվ.15,07,1940թ) գույքային իրավունքները ՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0,1 հա հողամասին կից ավել օգտագործվող 0,0269 հա հողամասի, ընդհանուր հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների (բնակելի տուն՝ 35,4 քմ, կառուցված 1974թ,մառան՝16,8քմ, կառուցված 1974թ,)նկատմամբ:

Բնակելի տունը բավարարում է <Համայնքների վարչական տարածքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Ռադիկ Սազանի Խաչատրյանի (ծնվ.15.07.1940թ) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և հողամասում առկա բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տրամադրել Երևանյան 1 փողոց, թիվ 3 հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

2017թ. հոկտեմբերի 13-ին
գ.Գայ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 50

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 80-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գայ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 42 որոշումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայ համայնքի սեփականություն հանդիսացող՝ԿԾ 04-033-097 բնակ. նշանակության 0,002 հա հողատարածքը վարձակալությամբ տրամադրել <ՀԷՑ> ՓԲԸ-ին:

2.<ՀԷՑ>ՓԲԸ-ի հետ կնքել 0,002 հա հողատարածքի վարձակալության պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2017թ. հոկտեմբերի 13-ի
գ.Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք**
**ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 51

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ, 36-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 161-րդ հոդվածով և հիմք ընդունելով Աստղիկ Մելքոնյանի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի դիմումը.

Որոշում եմ

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ Նարեկ Հովհաննեսի Մնացականյանի /ծնվ.11.06.1999թ/ նկատմամբ սահմանել հոգաբարձություն՝ հոգաբարձու նշանակելով նրա մորը՝ Աստղիկ Գևորգի Մելքոնյանին:

2.Հսկողություն սահմանել Նարեկ Հովհաննեսի Մնացականյանի նկատմամբ նշանակված հոգաբարձու Աստղիկ Մելքոնյանի գործունեության նկատմամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

**2017 թ. հոկտեմբերի 13-ին**
**գ.Գայ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ
26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 52

### ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով,<Առևտրի և ծառայությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով , Արմավիրի մարզի Գայ համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողություն իրականացնելու նպատակով.

Որոշում եմ՝

1.Արմավիրի մարզի Գայ համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտի տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացնել հսկողություն, որի իրականացումը վերապահել Գայի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին՝ համաձայն հավելվածի:

2.Հսկողություն իրականացնող աշխատակիցներին ՝ սույն որոշմամբ նախատեսված հսկողությունն իրականացնել 1 աշխատանքային օրվա ընթացքում և այդ մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

2017թ. հոկտեմբերի 13-ին
գ.Գայ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գայ համայնքի
ղեկավարի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի
թիվ 52 որոշման

ՑՈՒՑԱԿ

| N | Տնտեսվարող սուբյեկտի անունը և ազգանունը | Հսկողության իրականացման օրը | Հսկողություն իրականացնողի անուն, ազգանունը |
|---|---|---|---|
| 1 | Գնորգ Համբարձումյան | 27.09.2017թ | Խուրշուդ Քոչարյան |
| 2 | Գարիկ Մարտիրոսյան | 27.09.2017թ | Գայանե Հակոբյան |
| 3 | <Գայ>սուպերմարկետ | 27.09.2017թ | Խուրշուդ Քոչարյան |
| 4 | Սոնա Շահինյան | 27.09.2017թ | Արփիկ Ինջիղուլյան |
| 5 | Արմիկ Մինասյան | 27.09.2017թ | Արփիկ Ինջիղուլյան |
| 6 | Վալերի Իսկանդարյան | 27.09.2017թ | Գայանե Հակոբյան |
| 7 | Իսկուհի Խաչատրյան | 27.09.2017թ | Տաթևիկ Հարությունյան |
| 8 | Եգոր Նազարյան | 27.09.2017թ | Անահիտ Տերտերյան |
| 9 | Ռոմիկ Գասպարյան | 27.09.2017թ | Մարինե Կոստանյան |
| 10 | Հրաչյա Մուրադյան | 27.09.2017թ | Անահիտ Տերտերյան |
| 11 | Սերժիկ Բայյան | 27.09.2017թ | Տաթևիկ Հարությունյան |
| 12 | Աշոտ Ներսիսյան | 27.09.2017թ | Խուրշուդ Քոչարյան |
| 13 | Արտավազ Սարգսյան | 27.09.2017թ | Խուրշուդ Քոչարյան |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 29

ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ, 167-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Աննա Թադևոսյանի 2017 թվականի օգոստոսի 10-ի համաձայնագիրը.

Կարգադրում եմ .

1.Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին թույլատրել օգտագործելու 2017 թվականի ամենամյա արձակուրդի չօգտագործած 19 աշխատանքային օրը՝սույն թվականի սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 19-ը ներառյալ:

2.Աննա Թադևոսյանին աշխատանքի մեջ համարել 2017 թվականի հոկտեմբերի 20-ից:

3.Ա. Թադևոսյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել Գայի համայնքապետարանի առաջատար մասնագետ Ժենիկ Բոյաջյանին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2017թ. հոկտեմբերի 13-ին
գ.Գայ